



Հովհաննես Թուխանյան

Անբան Հուռին

Լինում է, չի լինում՝ մի կնիկ: Էս կնիկը մի աղջիկ է ունենում, անունը՝ Հուռի: Մի ծույլ, անշնորհք աղջիկ: Օրը մինչև իրիկուն պարապ-սարապ նստած:

Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է,
Բամբակը կորիզոտ է:
Մաստակ պիտի, որ ծամեմ,
Կրտերը տիտիկ անեմ,
Անցնողին մըտիկ անեմ .
Ուտեմ, խմեմ,
Մըթնի, քընեմ:

Հարևանները անունը դնում են Անբան Հուռի: Ինչ մերն է՝ աղջկանը գովելով ման է գալի . լիդրը գգող, լիդրը մանող, հա՛մ խճճող, հա՛մ խճուճը հանող, ձևող-կարող, հունցող-թխող, եփող-թափող, մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները՝ ոսկի:

Էս գովասանքը գնում, մի երիտասարդ վաճառականի ականջն է ընկնում: Էս երիտասարդ վաճառականն ասում է՝ իմ ուզածն էլ հենց սա է, որ կա:
Գլխապատառ գալիս է Անբան Հուռին ուզում է, հետը պսակվում, տանում իրենց տունը: Մի քանի ժամանակից ետը մի տասը-քսան բեռը բամբակ է առնում, տալիս կնկանը, թե՛ ես գնում եմ հեռու տեղեր առուտուրի, դու էլ Էս բամբակը գգի, մանի, գամ, տանեմ ծախեմ, հարստանանք:

Անբան Հուրին է, իրեն համար մաստակ ծամելով ման է գալի: Մի օր էլ գետի ափովն անց կենալիս լսում է, որ գորտերը կոկոում են: - Փե՛փեկ . . . Կե՛կեկ . . . Փե՛փեկ . . . Կե՛կեկ . . .

- Վո՛ւյ, աղչի Փեփեկ, Կեկեկ, ձեն է տալի Անբան Հուրին,- որ բամբակը բերեն ձեզ տամ, կզգե՞ք . . .

- Բե՛ր, բե՛ր, բե՛ր . . .

Անբան Հուրին ուրախանում է: Գնում է, բամբակը կրում, բերում, ածում գետը:

- Դե գզեց ե՛ք, մանեցե՛ք: Մի քանի օրից ետը կգամ, մանածը կտանեն, որ ծախենք:

Գնում է, մի քանի օրից ետ է գալի: Գորտերը էլի կոկոում են,

- Փե՛փեկ-Կեկեկ . . . Փե՛փեկ-Կեկեկ . . .

- Աղչի Փեփեկ, Կեկեկ, դե մանածը բերեք:

Գորտերը շարունակում են կոկոալ, իսկ մանածը չեն բերում:

Հուրին մին էլ որ նայում է, աչքովն ընկնում գետի ափերին ու քարերին փաթաթված կանաչ մուրը:

- Վո՛ւյ,- ասում է,- քոռանամ ես, տե՛ս, համ գզել ու մանել են, համ խալիչա են գործել իրենց համար:

Ձեռը ճակատին է դնում, ձեն տալի .

- Դե որ խալիչա եք գործել, մեր բամբակի փողը բերեք:

Ձեն է տալի ու ոտը փոխում է, մտնում ջուրը: Հանկարծ ոտը առնում է մի կոշտ բանի: Հանում է, տեսնում՝ մի կտոր ոսկի: Փեփեկին ու Կեկեկին շնորհակալություն է անում, ոսկու կտորը փեշը դնում, գալիս տուն: Մարդն էլ առուտորի տեղիցն է գալիս: Գալիս է տեսնում՝ իրենց թարեքին մի մեծ ոսկու կտոր:

- Ա՛յ կնիկ, էս ի՞նչ ոսկի է:

Թե՛ բա չես ասիլ, բամբակը Փեփեյի ու Կեկեյի վրա ծախեցի, բամբակի փողն է:

Մարդը ո՛նց է ուրախանում, էնպես էլ դուք ուրախանաք: Ջոքանչին հրավիրում է, ընծաներ է տալի, գովում է, շնորհակալություն է անում, որ էնպես խելոք, շնորհքով, աշխատասեր աղջիկ է մեծացրել: Քեֆ է սարքում, նստում են քեֆի:

Ջոքանչը խորամանկ կին է լինում: Իմանում է, թե բանը ինչպես է պատահել, վախենում է՝ փեսեն էլի աղջկանը գործ հանձնի, ու գաղտնիքը բացվի: Քեֆի լավ ժամանակը մի բզեզ է ներս մտնում ու բռռացնելով պտտվում սենյակում: Էս գոքանչը վեր է կենում, գլուխ է տալի բզեզին: Ասում է .

- Բարով եկար, մորքուր ջան, ո՛նց ես, ո՛րտեղ ես, էսքան ժամանակ չես երևում . . . Ախր քեզ ո՞վ էր ասում՝ էդքան բան անես, որ էդ օրն ընկնես . . .

Փեսեն մնում է զարմացած: Ասում է .

- Ա՛յ մեր, խելագարվեցի՞ր, քեզ ի՞նչ պատահեց, էդ բզեզին էդ ի՞նչ ես ասում, մորքո՞ւրս որն է . . .

Ջոքանչը թե .

- Ա՛յ որդի, քեզանից ինչ թաքցնեմ, դու էլ իմ որդին ես: Չես ասիլ՝ էս բզեզն իմ մորքուրն է: Խեղճը շատ աշխատասեր կնիկ էր: Ամբողջ օրն աշխատում էր, շատ աշխատելուց կուչ եկավ, պստիկացավ, էնքան պստիկացավ, որ դառավ բզեզ: Մեր ցեղն էսպես է: Շատ աշխատասեր ենք: Բայց աշխատելուց պստիկանում, բզեզ ենք դառնում:

Էս որ փեսեն լսում է, վախից քիչ է մնում պռոշը ճաքի . Էն է լինում որ էն, արգելում է Հուռնին ձեռն էլ բանի չտա, որ մորքուրի նման բզեզ չդառնա: